

Հայտարարություն

<<Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարան>> ՊՈԱԿ-ը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության <<Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում >> մասնագիտական խմբի «Արևային էներգետիկ կայանների մոնտաժման, նորոգման և սպասարկման էլեկտրիկ-փականագործ» որակավորման վարպետի թափուր պաշտոնի համար:

Հաստատության <<Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում>> մասնագիտական խմբի վարպետի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայման է հանդիսանում դիմողի համապատասխանությունը ՀՀ ԿԳՆ 09.12.2019 թվականի թիվ 1207-Ա/2 հրամանով հաստատված՝ «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0713.07.4 <<Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում>> մասնագիտության 0713.07.01.4 «Արևային էներգետիկ կայանների մոնտաժման, նորոգման և սպասարկման էլեկտրիկ-փականագործ» որակավորման պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին» որոշման պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար հարկավոր է ներկայացնել.

1 դիմում ,

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն,

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետության քաղաքացի լինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Լոռու մարզ, Ալավերդի համայնք, ք. Ալավերդի, Մարտի 8-ի փող., 2-րդ շենք հասցեում՝ 2024թ. օգոստոսի 1-ից մինչև օգոստոսի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ Լոռու մարզ, Ալավերդի համայնք, ք. Ալավերդի, Մարտի 8-ի փող., 2-րդ շենք հասցեում:

Տեղեկությունների համար կարող եք դիմել ՊՈԱԿ-ի՝ alarus@bk.ru էլեկտրոնային փոստի միջոցով: